զել զմոլորութիւնս, զոր ուսեալ էին 'ի դրոց Որոգինեայ։

Ապա 'ի լինել բանից եւ վիճմանց՝ յերկուս ճեղքեցան միանձունքն եւ սատակացաւ անհնարին խռովութիւնն, մինչ զի բարկութեամբ յարձակել 'ի վերայ իրերաց բահ և բրիչ 'ի ձեռին հարկանել, սատակել և կործանել իսկ ըզվանսն։ Լուր աղմկիս և չփոթութեանց կրօնաւորացս այսոցիկ վաղ իսկ եհաս 'ի Կոստանդինուպոլիս յականջս Յուստիանոսի Կայսեր 'ի ձեռն Պետրոսի հայրապետին Երուսաղէմի եւ Կայսրն հրովարտակաւ մերժեաց զմոլորութիւնս Որոգինեայ։

Ի հասանել հրովարտակին յԵրուսաղէմ՝ ընկալան զայն Եպիսկոպոսունք Պաղեստինոյ, այլ ոչ երբէք դադարեաց զայրոյթ խռովութեան 'ի միջոյ վանականաց. ոմանց թողեալ 'ի բաց գնացին, և ոմանք յարեցան յայնս՝ որք ջատագովքն էին ուսման Որոգինեայ։

Եւ իրրեւ ետես Կայսրն թէ չդադարի խռովութիւնն՝ եհան հրովարտակ գումարել ժողով Տիեզերական. կոչեցաւ և հայրապետն Հռոմայ Վիգիլիոս. եկին և եպիսկոպոսունք յիւրաքանչիւր քաղաքէ, թուով 160. (547)։ Եւստաթիոս Հայրապետ Երուսաղէմի չկարաց անձամբ ժամանել 'ի ժողովն, այլ առաքեաց ընդ իւր փոխանորդս։ Ութն գումարմամբ քննեցին և 'ի գլուխ հանին զխնդիրսն որ յուզէին, այսինքն նզովեցին զԹէոդորոս Մոպսուեստացի հանդերձ գրովք իւրովք, զգիրս Թէոդորետոսի Կիւրացւոյ, եւ զԹուղթն Իբասայ Եդեսացւոյ առ Մարիս Պարսիկ, և սահմանեցին նզովս կամ կանոնս 11։

Յետ այնորիկ մատեան 'ի դատ Որոգինեայ, որ մեծամեծ խռովութեանց լեալ էր պատճառ 'ի Պաղեստին. զի գրեալ էր Կայսրն՝ ըստ աղաչանաց վանականացն Երուսաղէմի՝ առ ժողովեալ Հարս, քննել զամենայն սխալանս Որոգինի եւ որոց ընդ նմա միաբանին՝ և նզովել. առաքեաց առ ժողովն և զայն երկայն հրովարտակ իւր, զոր յօրինեալ էր ընդդէմ կարծեաց Որոգինի։ Ընկալեալ ժողովելոց զայսոսիկ՝ կարդային վճիռ նզովից 'ի վերայ Որոգինեայ և աշակերտաց նորին։ Եւ զի Վիգիլիոս հայրապետ Հռոմայ չ'միաբանեցաւ ընդ ժողովեալ Հարս, վտարեցաւ յաքսորս եպիսկոպոսակցովք իւրովք 'ի կղզի ինչ